

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՄԱԼԻՐ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁ

Ա. Ս. ԲԱՂՂԱՍԱՐԵԱՆ

Լեզվի և խոսքի փոխհարաբերությունը մշտապես գտնվել է լեզվաբանական ուսումնասիրությունների կենտրոնում: Առաջ են քաշվել բազմաթիվ տեսություններ, մշակվել են գիտական մոտեցումներ, ընդ որում՝ ոչ միայն լեզվաբանության, այլև հարակից գիտությունների՝ փիլիսոփայության և տրամաբանության կողմից: Բոլոր այդ ուսումնասիրությունների նպատակը եղել է լեզվի և խոսքի ստույգ սահմանազատումը և որոշելը, թե երբ է լեզուն դառնում խոսք և ինչպես:

Լեզվից խոսքին անցման գործընթացին՝ առկայացմանը, հատուկ ուսումնասիրություններ են նվիրել բազմաթիվ լեզվաբաններ, ինչպես օրինակ՝ Բրյունոն, Բալլին, Գիյոմը, ժամանակակից լեզվաբանության մի շարք ներկայացուցիչներ՝ Բոեն, Ժոյին, Բարբերիսը և այլք: Սակայն խնդրի վերաբերյալ ասելիքը դեռևս սպառված չէ, և այն դեռ շարունակում է մնալ լեզվաբանների ուշադրության կենտրոնում:

Առկայացման տեսությունը սկսում է ձևավորվել 20-րդ դարի առաջին քառորդում: Սակայն խնդրի ամբողջական գիտական ընկալման փորձերի այդ ժամանակահատվածում լեզվաբանների աշխատություններում «առկայացում» տերմինը դեռևս շրջանառության մեջ չէ: Այսպես՝ Գիյոմը 1919 թվականի «Հողի խնդիրը և դրա լուծումը ֆրանսերեն լեզվում» աշխատությունում օգտագործում է «անցում» (transition), «իրականացում» (re'alisation) տերմինները, 1929 թվականի «Բայ և ժամանակ» աշխատությունում՝ «իրականացում», ապա և՝ «առկայացում» (actualisation) տերմինները, սակայն որպես դրա պարզաբանում փակագծերում տալիս է «իրականացում» տերմինը: «Առկայացում» տերմինը վերջնականապես օգտագործվում է երկրորդ աշխատության վերջում: Դա պայմանավորված է ընթացիկ վերլուծություններով և, հատկապես, նախապատրաստվում է «actualité»՝ արդիականություն, ներկա, տերմինով: Վերջինս ներմուծվում է ճշգրտորեն նշելու համար այն պահը, երբ անցում է կատարվում վիրտուալից իրականին: «Առկայացում» տերմինը գալիս է այսպիսով «իրականացում» տերմինն ուղղելու և ոչ թե այն որպես հոմանիշ փոխարինելու¹:

Լեզվաբանության մեջ ընդունված է «ակտուալիզացիա»՝ առկայացում, տերմինի հեղինակ համարել Բալլիին²: 1922 թվականի «Մտածողություն և լեզու» հոդվածում իրականության հետ հասկացությունների նույնացումը Բալլին անվանում է ակտուալիզացիա: Տալով վերջինիս սահմանումը՝ նա այն դիտում է որպես լեզուն խոսք դառնալու գործընթաց: 1932 թվականի «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսերեն լեզվի հարցեր» աշխատությունում Բալլին նշում է, որ նախադասության անդամ դառնալու համար հասկացությունը պետք է առկայանա, և որպես առկայացման գործընթացի իրականացման տեղ նա դիտում է նախադասությունը:

Բալլին առկայացումը դիտում է չորս ասպեկտով: Նախ և առաջ, նա քննում է վիրտուալ և առկայացած հասկացությունների ծավալաբովանդակային հարաբերակցությունը. վիրտուալ հասկացությունը անորոշ է ըստ ծավալի, օրինակ՝ սխալ է կարծել, թե «ծաղիկ» հասկացությունը պարունակում է «ծաղիկ» առարկաների ստույգ քանակ: Սակայն վիրտուալ հասկացությունը որոշյալ է իր բովանդակությամբ, յուրաքանչյուր հասկացություն բնորոշվում է իրեն հատուկ սահմանափակ քանակի գծերով: Առկայանա-

¹ St'u Gustave Guillaume, Temps et verbe, Paris, 1929, էջ 121:

² St'u Jeanne-Marie Barberis, Jacques Bres, Paul Siblot, l'incondition et complexité d'un concept, De l'actualisation, CNRS, Paris, 1998, էջ 24:

³ St'u նույն տեղը, էջ 23:

լուց հետո ստացվում է ծավալի և բովանդակության հակառակ հարաբերակցություն՝ առկայացած հասկացությունը որոշյալ է ծավալով, աճորոշ՝ բովանդակությամբ՝:

Երկրորդ ասպեկտը, որով քննվում է առկայացումը, հասկացության մասնավորեցումն է իրականության մեջ դրա տեղայնացման և քանակական բնորոշման միջոցով: Իրի կամ գործընթացի տեղայնացումը կարող է լինել աճորոշ կամ չգիտակցված, բայց և այնպես, ըստ Բալլիի, այն աճհրաժեշտ է, քանի որ աճհար է խոսել մի իրի կամ գործընթացի մասին առանց մտովի պատկերացնելու այն իրականությունը, որով շրջապատված է տվյալ իրը կամ գործընթացը:

Իրերի տեղայնացումը պայմանավորված է դրանց և խոսող աճծի միջև եղած տարածականության աստիճանով: Գործընթաց արտահայտող հասկացությունների տեղայնացումը իրականանում է քայական ժամանակի միջոցով: Իրերի քանակական բնորոշումը կախված է դրանց թվարկելի կամ ոչ թվարկելի լինելուց, իսկ գործընթացների քանակական բնորոշումը՝ բայի կերպից:

Երրորդ ասպեկտով առկայացած հասկացությունները Բալլին անվանում է խոսքի հատուկ անուններ՝, որոնք ամեն անգամ հանդես գալով խոսքում՝ կարող են մատնանշել մեկ այլ աճհատի (իր կամ աճծ), օրինակ՝ ես դերանունը, որը ամեն անգամ կարող է մատնանշել նոր խոսող աճծի: Այս խմբին Բալլին հակադրում է լեզվի հատուկ անունները, որոնք հանդես գալով խոսքում՝ մատնանշում են միևնույն աճհատին: Աճնանունների և տեղանունների հետ մեկտեղ Բալլին այդ խմբի մեջ է դասում նաև որոշ հասարակ անուններ, ինչպես օրինակ՝ ոսկի, մահ, առաքինություն և այլն՝ հիմնվելով դրանց որոշ ոճական կիրառությունների վրա:

Եվ վերջապես, չորրորդ ասպեկտը: Բալլին խոսում է առկայացման երկու տեսակի մասին՝ ներակա (իմպլիցիտ) և արտակա (էքսպլիցիտ)՝ յուրաքանչյուրն իր լրիվ և մասնակի ձևերով: Առկայացումը, ըստ Բալլիի, լրիվ ներակա է, երբ այն բխում է միմիայն խոսքային իրավիճակից կամ համատեքստից: Այսպես՝ «Օւնը հայում է» նախադասության մեջ «շունը» կարող է մատնանշել մեզ աճհայտ մի շուն, շուն, որը հայտնի է, կամ՝ ընդհանրապես շուն. ամեն դեպքում այդ հասկացությունը վիրտուալ չէ:

Առկայացումը մասամբ է ներակա, երբ առկայացուցիչը քանակ արտահայտող նշանն է, օրինակ՝ երկու զինվոր:

Առկայացումը լրիվ արտակա է, երբ վիրտուալ հասկացությունը տեղայնացնող աճհամը հանդես է գալիս միևնույն բառախմբում որպես վիրտուալ հասկացության բնորոշիչ, օրինակ՝ պարտիզպանի շունը, մեր տան կտուրը և այլն:

Եվ վերջապես, առկայացումը մասամբ է արտակա, երբ իրավիճակից կամ համատեքստից բխող ակտուալ հասկացությունը նշվում է այնպիսի նշանով, որը նրան տեղայնացնում է, մատնանշում է այն, ներկայացնում է իրական վիճակում կամ հիշեցնում է, նորից է ներմուծում արդեն արտահայտված համատեքստի հետ զուգորդված:

Առկայացման մասին առաջին վերլուծություններից լինելով՝ Բալլիի նշված աշխատություններում առկա են որոշ թերություններ, և դա բնական է, քանի որ մի երևույթի ամբողջական ուսումնասիրության համար ժամանակ է պահանջվում: Աճորդատուները դրանց:

Բալլին առկայացումը քննում է վերոհիշյալ չորս ասպեկտներով, որոնք, ըստ էության, զուգահեռ են մեկը մյուսին և զուրկ են ամբողջականությունից: Այսինքն՝ եթե ավելի ուշադիր քննելու լինենք, ապա կտեսնենք, որ այդ չորս ասպեկտներից առաջին երկուսը՝ ծավալաբովանդակային հարաբերակցությունը, տեղայնացումը և քանակական բնորոշումը, կարելի է մտցնել ներակա և արտակա դասակարգման մեջ, և եթե դրանք այդ դասակարգման մեջ ամբողջովին չեն մտնում, ապա կարող են դիտվել որպես ենթատեսակներ: Հենց ինքը՝ Բալլին, ներակա և արտակա տերմիններն առաջարկում է դիտել բացառապես տեղայնացման տեսանկյունից: Ինչ վերաբերում է առաջարկված Վեզվի և խոսքի հատուկ անուններ՝ տարբերակմանը, ապա այն, մեր կարծիքով, վիճարկելի է:

¹ Տե՛ս Շարլ Բալլի, *Общая лингвистика и вопросы французского языка*. М., 1955, էջ 87-108:

² Տե՛ս նույն տեղը:

Բալլին բնութագրում է անկայացումը որպես լեզվից խոսքին անցման գործընթաց, սակայն չի նշում այն ուղիները, որոնցով այդ գործընթացն իրականանում է: Այս անհշուխտամբ Բոեն իրավացիորեն նշում է. «Այդ անցման վերաբերյալ ոչ մի կոնկրետ բան չի ասվում, ավելի ճիշտ՝ ոչինչ թույլ չի տալիս ասել, որ հեղինակը անկայացումը ընկալում է որպես անցում, որպես գործընթաց»⁶:

Բալլին որպես անկայացման գործընթացի իրականացման տեղ է նշում նախադասությունը: Անկայացման գործընթացի իրականացման դաշտի նման սահմանափակումն անընդունելի է, որովհետև անկայացումը չի կարող դիտվել միայն նախադասության շրջանակում, կան ավելի փոքր և ավելի մեծ միավորներ. այսպես՝ Ժակ Բոեն տարբերում է անկայացման գործընթացի իրականացման չորս մակարդակ՝ բառ, շարույթ, նախադասություն, խոսք: Առաջին և երկրորդ միավորների մակարդակով, ըստ Բոենի, տեղի է ունենում նախադասության անդամների անկայացումը, ինչպես նաև՝ շարույթի կառուցումը, երկրորդ և երրորդ միավորների, այսինքն՝ շարույթի և նախադասության մակարդակով՝ ֆուզային անկայացումը, իսկ նախադասության և խոսքի մակարդակով՝ տեքստային անկայացումը⁷:

Եվ վերջապես, Բալլիի վերլուծությունները կենտրոնացած են հիմնականում գոյականի, մասամբ՝ բայի վրա. մյուս խոսքի մասերի անկայացման մասին ոչինչ չի ասվում:

Անկայացման տեսության հիմնաքարային մի շարք դրույթներ, որոնք իրենց զարգացումն են գտել ժամանակակից լեզվաբանության մեջ, պատկանում են Գյուստավ Գիյոմին: Ի տարբերություն Բալլիի, Գիյոմը իր տեսությունը կառուցում է անկայացման գործընթացային բնույթի վրա: Նա անկայացումը դիտում է որպես մտքի շարժում վիրտուալից դեպի իրականը: Այդ շարժումը, ինչպես մտքի ցանկացած շարժում, պահանջում է ժամանակ, որը Գիյոմը անվանում է իրականացման ժամանակ (temps opératif) և որն ընթանում է երեք աստիճանով՝ ներուճակ աստիճան՝ առարկաների, հատկությունների, գործընթացների վիրտուալ պատկերը գիտակցության մեջ, միջանկյալ աստիճան և անկա աստիճան՝ խոսքում հասկացությունների նույնացումն իրականության հետ: Այս աստիճանները կազմում են անկայացման պատկեր-ժամանակ ամբողջականությունը, հետագայում սրա մոդելի վրա Լաֆոնը կազմում է պատկեր-տարածություն ամբողջականությունը:

Գիյոմը իրականությունը դիտում է որպես արդեն մտածած, անկայացումը իր աստիճաններով համընկնում է մտքի շարժման հետ:

Արդի լեզվաբանական ճյուղերից մեկը՝ պրաքսեմատիկան, անկայացման գործընթացի վերլուծության մեկնակետ է վերցնում Գիյոմի դրույթները, լրացնում և զարգացնում դրանք: Այսպես՝ պրաքսեմատիկայի համար իրականությունն ունի օբյեկտիվ բնույթ, անկայացումը իրականությունը վերարտադրելու համար մտածելու շարժումն է խոսքային ակտում այնպիսի պատկերի կառուցմամբ, որն անկայացումն աստիճանակարգում է ըստ իսկության աստիճանների⁸: Ավելի պարզ լինելու համար՝ անկայացման յուրաքանչյուր աստիճան մեկ քայլ է ներուճակ հասկացությունը իրականության հետ նույնացնելու համար: Իրականության պատկերումը կատարվում է երկու պլանով՝ պրաքսեմների (գործողությունը կատարողին և գործողությունը նշող միավորների) միջոցով՝ պրաքսեմիկ անկայացում, պարապրաքսեմների (անձի, ոչ անձի, գոյականի և բայի անկայացուցիչների ցուցիչների) միջոցով՝ պարապրաքսեմիկ անկայացում: Պրաքսեմատիկան զարգացնում է Գիյոմի առաջ քաշած իրականացման ժամանակի զադախարը՝ այն բաժանելով երեք հատվածի՝ խոսքը ծրագրելու, արտաբերելու և ավածը հիշողության մեջ կուտակելու ժամանակների:

Ինչպես պարզ դարձավ, անկայացման տարբեր աստիճաններում հասկացության վիրտուալ պատկերը այս կամ այն չափով է մոտենում իրականությանը և նույնանում նրա հետ: Վերը շարադրվածը ավելի պարզ կդառնա, եթե մենք դիտարկենք այն ֆրանսերեն օրինակների վրա: Այսպես՝ une montre de dame (կնոջ/ կանացի ժամացույց) քա-

⁶ Jacques Bres, De Bally à la praxématique, De l'actualisation, CNRS, Paris, 1998, p. 71.

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 78:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 72:


ռակապակցության մեջ ունենք մեկ ակտուալ՝ սոս օմոնտրե և մեկ վիրտուալ հասկացություն՝ Դամ: Այս վերջինի՝ առանց հողի հանդես գալը նշանակում է, որ իրականում ոչ մի կոնկրետ կնոջ չի վերաբերում այս հասկացությունը՝ ի հակադրություն սոս օմոնտրե հասկացության, որը մյուս ժամացույցներից առանձնացնում է այս տեսակը՝ նախատեսված կանանց համար: Այս օրինակում մենք ունենք առկայացման առաջին՝ ներուճակ աստիճանը:

Երկրորդ աստիճանում վիրտուալ հասկացությունը ոչ ամբողջությամբ է հարաբերակցվում իրականության հետ, առկայացման նվազ աստիճանը բխում է վիրտուալ պատկերի և իրականության նվազ համապատասխանությունից: Հասկացությունը չի առանձնացնում իրականության կոնկրետ մի առարկա, այն ընդհանուր կերպով արտահայտում է ցանկացած առարկա: Մեկ հասկացությունը ենթադրել է տալիս մի քանի հնարավոր առարկաների մասին, և քանի դեռ կոնկրետացումը կատարված չէ, առկայացումը մնում է միջանկյալ աստիճանում: Այսպես՝ *donnez-moi un stylo* (իմձ (մի) գրիչ տվեք) նախադասության մեջ որևէ կոնկրետ գրիչ նկատի չի առնվում, «գրիչ» հասկացության տակ կարող է հասկացվել իրականության ցանկացած «գրիչ»- առարկա՝ առանց ճշտելու դրա որևէ հատկանիշ:

Երրորդ՝ առկա աստիճանում, հասկացությունն ամբողջությամբ նույնանում է իրականության հետ: Խոսքում այդ նույնացումն արտահայտվում է ցուցականությամբ, ստացականությամբ, իսկ հոլովական համակարգերով օժտված լեզուներում նաև՝ հոլովական վերջավորություններով: *Cette maison est blanche* (Այս տունը սպիտակ է): նախադասության մեջ հասկացությունը ամբողջությամբ նույնանում է նկատի առնվող առարկայի հետ, խոսքը կոնկրետ առարկայի մասին է, մեկ այլ առարկայի ենթադրումը բացառվում է:

Առկայացման գործընթացը պայմանավորված է մի շարք ներքին և արտաքին նախադրյալներով, որոնց միջոցով հնարավոր է դառնում հասկացությունների նույնացումը իրականության հետ: Որպես ներքին նախադրյալներ կարելի է դիտել. ա) վիրտուալություն, իրականություն բևեռները և դրանց միջև ընկած ակտուալություն բաժանումը, բ) առկայացման աստիճանները, իսկ որպես արտաքին նախադրյալներ՝ խոսակիցներին, նրանց ինտելեկտուալ դաշտերը, խոսքային իրավիճակը և համատեքստը:

Վիրտուալի իրականության անցումը կատարվում է առկայացման շեմի միջով, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ վիրտուալի և իրականության միջև ընկած ակտուալը՝ խոսքի պահը: Անդրե ժոլին նշում է, որ «եթե լեզուն դիտվի որպես խոսքի հնարավորություն, իսկ խոսքը՝ վերցրած որպես արդյունք, ասված, ապա առկայացման գործընթացը՝ ճշգրիտ իմաստով, խոսքային ակտն է՝ ասելը, այլ կերպ՝ ներուճակ վիճակի և առկա վիճակի միջև ընկած առկայացման շեմի ներթափանցումը»⁹: Ահա հենց այստեղ է, որ հասկացությունը այս կամ այն աստիճանով հարաբերակցվում է իրականության հետ: Ստորև բերենք ժոլիի առաջարկած առկայացման գծապատկերը՝ դրան ավելացնելով առկայացման աստիճանները.




⁹ André Joly, "Actuel", "actualité", "actualisation" chez Gustave Guillaume, De l'actualisation, CNRS, Paris, 1998, p. 84.

Այս գծապատկերը առկայացման գործընթացի ներքին նախադրյալների համակարգն է ներկայացնում: Թե լեզվի միավորը որ աստիճանով է առկայանում խոսքի պահին, կախված է արտաքին նախադրյալներից, ինչպես օրինակ՝ համատեքստից: «Հոդի խնդիրը և դրա լուծումը ֆրանսերեն լեզվում» աշխատության մեջ Գիյոնը առանձնացնում է մտածող սուբյեկտի կողմից գոյական անվան նկատմամբ երկու տիպի մտավոր վերաբերմունք, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է համապատասխան հոդ: Նա գտնում է, որ «Առաջին տիպին պատկանողները մշտական են և վերաբերում են ներուճակ գոյականին, որի վիճակը դրանք ամրակայում են գիտակցության մեջ, երկրորդ տիպին պատկանողները առաջանում են պահի ներգործությամբ և նպատակ ունեն փոփոխել այդ վիճակը, որպեսզի այն ավելի լավ հարմարվի համատեքստին»¹⁰: Համատեքստի մեջ գոյականի ձևի մասին խոսելիս Գիյոնը գրում է. «Համատեքստում գոյականի ձևը, ընդարձակ լինի այն կամ ոչ, երկու եզրերի՝ ակտուալի և ոչ ակտուալի միջև եղած փոփոխականության արդյունք է: Ընդարձակող (որոշյալ - Ա. Բ.) հոդը նախորդում է այն գոյականներին, որոնց համատեքստը հարաբերում է ոչ ակտուալության, պոնկտուալ (անորոշ - Ա. Բ.) հոդը՝ այն գոյականներին, որոնց համատեքստը հարաբերում է ակտուալության»¹¹: Ընդհանուր առմամբ բնութագրելով հոդի տեսությունը՝ Գիյոնը այն դիտում է որպես համատեքստի ներգործության և գոյականի դիմադրության միջև հնարավոր ներդաշնակության ուսումնասիրություն:

Համատեքստը կառուցվում է ակտուալի մեջ խոսակիցների կողմից իրենց ընդհանուր գիտելիքների հիման վրա: Այն հասկացությունը իրականությանը մոտեցնելու և նրա հետ նույնացնելու նախապայմանն է: Առկայացման գործընթացի, կնշանակի՝ խոսքային ակտի հաջող ընթացքի և ավարտի համար հարկավոր է, որպեսզի խոսակիցներն ունենան համապատասխան ընդհանուր գիտելիքներ համատեքստը կառուցելու համար: Եթե համատեքստի մակերեսը չի համապատասխանում իրականությանը, կամ եթե համատեքստը բացակա է առկայացման մեխանիզմից, ապա առկայացում չի կարող տեղի ունենալ: Այս խնդրին կանդրադառնանք ստորև, հիմա տեսնենք, թե խոսակիցները ինչ դիրք են գրավում առկայացման մեխանիզմում:

Նախ և առաջ հարկ է տարբերել խոսակիցների ինտելեկտուալ դաշտերը, որոնք տարածվում են վիրտուալություն, ակտուալություն, իրականություն բաժանման վրա և իրենց մեջ պարունակում են խոսակիցների կողմից իրականությունն ընկալելու, գնահատելու և ներկայացնելու կարողությունները: Իրենք խոսակիցները գտնվում են ակտուալ բաժանման մեջ, որովհետև, ինչպես գիտենք, ակտուալը խոսքի պահն է, որը պահանջում է խոսքը իրականացնողներ: Առկայացման գործընթացը տեղի է ունենում այն ժամանակ և այն մասում, երբ խոսակիցների դաշտերը որոշակի հատվածով համընկնում են միմյանց հետ: Այսինքն՝ առկայացումը տեղի է ունենում այն գիտելիքների շնորհիվ, որոնք ընդհանուր են խոսակիցների համար և որոնք ապահովում են համատեքստի կառուցումը և փոխընկալումը: Հենց այդ հատվածում է, որ գործում է վերը բերված գծապատկերը: Իսկ այն, ինչ շարադրվեց վերը, կարելի է պատկերել հետևյալ գծապատկերով.



¹⁰ Gustave Guillaume. Le problème de l'article et sa solution dans la langue française, Paris, 1919, p. 63.

¹¹ Նույն տեղում, էջ 103:

Այս գծապատկերը ներկայացնում է առկայացման գործընթացը իր ամբողջությամբ մեջ: Գծապատկերի յուրաքանչյուր տարր փոխկապակցված է մյուսի հետ և ապահովում է գործընթացի ամբողջականությունը, դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում առկայացումը թերի է: Դա կարող է լինել, օրինակ, այն դեպքում, երբ խոսակիցները տարբեր մասնագիտությունների տեր են, չունեն ընդհանուր գիտելիքներ նրանցից որևէ մեկի բնագավառի մասին, ուստի և նրանց գրույցի ժամանակ լիարժեք առկայացումը հնարավոր չէ, քանի որ առկայացումը իր ամբողջության մեջ կնշանակի, որ առկայացած հասկացությունը հասել է խոսակցին, և վերջինս ունակ է ընկալել այն իր ձևով, ծավալով և բովանդակությամբ: Այս դեպքում դա հնարավոր չէ, քանի որ խոսակիցը կարող է ընդհանրապես չճանաչել իրականության այն առարկան, որի հետ պետք է նույնացնի հասկացությունը:

Ընդհանուր գիտելիքների բացակայությունը անհնարին է դարձնում համատեքստի կառուցումը, որում պետք է առկայանան լեզվի միավորները: Սակայն համատեքստը կարող է բացակայել ոչ միայն այդ պատճառով: Այն կարող է բացակայել նաև այն դեպքում, երբ խոսակիցներից մեկը ինչ-ինչ պատճառով ի վիճակի չէ կառուցել այն, օրինակ՝ երբ նա հոգեֆիզիոլոգիական ոչ նպաստավոր վիճակի մեջ է գտնվում: Որպես օրինակ մեջբերենք մի հատված Հ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքից.

Էստեղ (հիվանդանոցում) գտավ նրան հայրը:

- Էդ ինչ ես ելել, Գիքոր ջան, - մղկտալով վրա ընկավ Համբուն:

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը:

- Գիքոր ջան, բա եկել եմ է՛, Գիքոր ջան ... ես քու ապին եմ, է՛ ...

Հիվանդը ոչինչ չհասկացավ: Նա զառանցում էր և զառանցանքների մեջ կանչում էր - « Միկի՛չ, Ջանի՛, ապի՛, նանի՛... »:

- Էստեղ եմ, Գիքոր ջան, նանը դարգել ա, որ քեզ տանեն մեր տունը ... գալիս չե՞ս ... Միկիչն ու Ջանին հրեն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում: Ի՞նչ ես ասում. դե խոսա է, Գիքոր ջան ...

- Է՛ստի համեցե՛ք, Է՛ստի համեցե՛ք, - բացականչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտոր խոսքեր ասավ ու ծիծաղում էր տաքության մեջ:

Վերը շարադրածը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացության. առկայացման գործընթացը պետք չէ դիտել միայն որպես լեզվի միավորների անցում խոսքին. այդ գործընթացը շարունակվում է մինչև այն պահը, երբ խոսակիցն ընկալում է այդ միավորները և հարաբերակցում է դրանք իրականության հետ: Միայն այդ ժամանակ կարելի է խոսել լիարժեք առկայացման մասին, այլ կերպ՝ ինչու՞ և ու՞մ համար են առկայացվում լեզվի միավորները: «Խոսակցի համար է, - գրում է Ժակ Բոնեն, - որ խոսողն առկայացնում է, այսինքն՝ իրականացնում է իր խոսելու մտադրությունը՝ ելնելով այն գիտելիքներից և համատեքստի կառուցումից, որ նա դնում է խոսակցի տրամադրության տակ և այն խոսքային իրավիճակից, որը նրա կարծիքով ընդհանուր է նրանց երկուսի համար»¹²:

Որոշ իմաստով առկայացման տեսակ կարելի է անվանել նաև գրական երկերը: Այս դեպքում արդեն հասկացությունները նույնանում են հեղինակի ստեղծած երևակայական իրականության հետ: Առկայացման այս տեսակի մասին մեկ պարբերությամբ խոսում է նաև Բալլին՝ հանգելով այն եզրակացության, որ այդ երկու՝ իրական և երևակայական իրականությունների միջև տարբերությունը բնավ կայուն չէ¹³: Առկայացման երկրորդ տեսակի ձևականացումը նպատակահարմար չէ հենց միայն այն պատճառով, որ այն ունի իրականացման իրեն հատուկ տեղը, որը տարբեր է նախորդից, այն է՝ երևակայությունը: Իրականի և երևակայանի սահմանները, կարծում ենք, հստակ են նույնիսկ այն դեպքերում, երբ, օրինակ, խոսելով իրական իրադարձությունների մասին, հեղինակը ցուցաբերում է սուբյեկտիվ վերաբերմունք և ներմուծում է երևակայական տարրեր:

¹² Jacques Bres, նշվ. աշխ., էջ 66:

¹³ Տե՛ս Шарль Балли, նշվ. աշխ., էջ 88:

Ինչ վերաբերում է առկայացման այս տեսակի մեխանիզմին, ապա այն նույնն է: Այստեղ հասկացությունը վիրտուալից անցնում է վիրտուալ ակտուալություն, ստանում է երևակայական հատկանիշներ, գործողությունը կատարվում է վիրտուալ ակտուալության մեջ, և նույնացումը կատարվում է երևակայական իրականության հետ: Այս դեպքում առկայացման գործընթացի հաջող ընթացքի համար պատասխանատվության մեծ մասն ընկնում է հեղինակի վրա, որովհետև նա պետք է ապահովի ընթերցողի գիտելիքները, որպեսզի վերջինս կարողանա ընկալել հեղինակի ստեղծած համատեքստը՝ ծանոթանալով դրա բոլոր բաղադրիչներին: Միայն այդ ժամանակ է ընթերցողը դառնում «գրուցակից»:

Ի մի բերելով վերե շարադրածը՝ կարելի է ասել, որ առկայացման գործընթացը իր բովանդակային կողմով խոսքային ակտն է և իր հաղորդակցական նշանակության մեջ համախմբում է խոսողի մտավոր-լեզվական առանձնահատկությունները, իսկ կառուցվածքային կողմով՝ նախադրյալների այն ամբողջականությունը, որն ապահովում է գործընթացի լինելիությունը:

А. С. БАГДАСАРЯН — Процесс актуализации и попытка его комплексно моделирования. — Интерес к процессу актуализации проявляется у лингвистов в первой четверти XX века. Уже тогда появляются первые термины, характеризующие процесс перехода языка в речь. Гюстав Гийом в своих трудах называет этот процесс “переходом”, “реализацией” и, наконец, “актуализацией”. Однако авторство термина “актуализация” языковедение отдает Шарлю Балли. В отличие от Балли, который рассматривает типы актуализации, Гийом строит свои исследования, основываясь на процессуальном характере актуализации и выдвигает понятие “времени исполнения”, в котором и протекает этот процесс.

Комплексное рассмотрение процесса актуализации позволяет выделять внутренне и внешние предпосылки, способствующие отождествлению понятия с реальностью. Внутренними предпосылками являются деление виртуальность-актуальность-реальность и степени актуализации, а внешними предпосылками - собеседники, их интеллектуальные поля, ситуация речи и контекст. Актуализация происходит там и тогда, где и когда интеллектуальные поля собеседников сходятся, т.е. собеседники на основе общих знаний строят контекст, в котором понятие должно актуализироваться.